

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԽԱՋԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՑՈՐ





ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Վարդուիի Աշոտի Բալոյանի «19-րդ դարի եւ 20-րդ դարասկզբի հայ թարգմանական մանկագրությունը (անգլիալեզու նյութերի թարգմանությունների հիման վրա)» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 16.01.2026 թ. թիվ 6 նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, Բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, Բ.գ.թ., դոցենտներ Քնարիկ Աբրահամյանը, Լուսինե Գալստյանը, Նաիրա Խաչատրյանը, Արմենուիի Մուրադյանը եւ մ.գ.թ., դոցենտ Նաիրա Տողանյանը:

ԼՍԵՑԻՆ՝ Վարդուիի Աշոտի Բալոյանի «19-րդ դարի եւ 20-րդ դարասկզբի հայ թարգմանական մանկագրությունը (անգլիալեզու նյութերի թարգմանությունների հիման վրա)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի գրականագիտության գծով 003 մասնագիտական խորհրդում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ Ժ.01.01 «Հայ միջնադարյան եւ նոր գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ, Բ.գ.դ., պրոֆ. Ս. Դանիելյանը, դոցենտներ Ք. Աբրահամյանը, Ն. Խաչատրյանը, Ա. Մուրադյանը եւ մ.գ.թ., դոցենտ Նաիրա Տողանյանը:

Վարդուիի Աշոտի Բալոյանի թեկնածուական աշխատանքը վերաբերում է մանկագրության հարցադրումներին, մասնավորաբար 19-րդ դարի եւ 20-րդ

դարասկզբի հայերեն թարգմանություններին: Այն բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից եւ կազմում է համակարգչային 150 էջ: Աշխատանքի գլուխները, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, ունեն հետեւյալ խորագրերը՝ «Անգլիական թարգմանական մանկագրության ուսումնասիրության տեսական հիմքերը», «Թարգմանական մանկագրության ձեւավորման վաղ փուլերը», «Արեւմտահայ թարգմանական մանկագրության զարգացումը» եւ «Արեւելահայ թարգմանական մանկագրության զարգացումը»:

Կատարված է ծավալուն աշխատանք, հեղինակը ուսումնասիրել է բնագրային եւ տեսաբանական աղբյուրներ՝ թե՛ հայալեզու, թե՛ օտարալեզու, եւ փորձ է կատարել ի մի բերել մանկագրությունը հայերեն թարգմանություններում՝ մասնավորաբար հենվելով անգլիալեզու նյութերի վրա:

Միանգամից նկատենք, որ ատենախոսության ուշագրավ դրվագները կապվում են սկզբնաղբյուր տեքստերի ճշգրտման, դրանց հեղինակների վկայակոչման հետ, մանավանդ այն դեպքում, երբ մամուլը հաճախ զլացել է նշել հեղինակի անունը կամ թարգմանվող ստեղծագործության խորագիրը (էջ 70-75, 120 եւ այլն):

Ատենախոսը նշում է, որ հիմնականում նկատի է առել մամուլը, ինչն արդարացված է, քանի որ 19-րդ դարի եւ 20-րդ դարասկզբի մամուլը՝ երկու ճյուղերով, հարուստ ներկայակն է ներկայացնում, եւ հետազոտողը բավական լուրջ ուսումնասիրություններ կարող է կատարել: Իհա՛րկե, մամուլի հետ աշխատանքը ենթադրում է տեական պրպտումներ, առանձնակի դժվարություններ առաջանում են պակասավոր համարների պարագայում:

Աշխատանքում թարգմանությունների աշխարհագրությունը ներկայացված է՝ ելնելով հիմնականում համայնքների տրամաբանությունից. տրվում են հնդկահայ թարգմանական գրականության միտումները, ապա կան անդրադարձներ Վենետիկի Մխիթարյան թարգմանական դպրոցին, պոլսահայ, զմյուռնիահայ եւ թիֆլիսահայ մամուլի անուններին:

Ատենախոսության մեջ բերվում են նաեւ քանակական կամ վիճակագրական տվյալներ, որոնք վերաբերում են մի կողմից ուղղակի թարգմանություններին, մյուս կողմից ներկայացնում են միջնորդավորված թարգմանությունների պատմությունը.

որոնք արեւմտահայ հեղինակների պարագային, հատկապես, եթե նկատի ունենանք Մխիթարյան թարգմանական դպրոցը, հիմնվում են ֆրանսերենի, իսկ արեւելահայ միջավայրում՝ ռուսերենի վրա:

Այժմ ամբիոնի դիտարկումների մասին.

Նախ, գանք ատենախոսության վերնագրից. առարկելի է թվում «հայ թարգմանական մանկագրություն» ձեւակերպումը, ուր հարցեր են առաջանում մանկական գործերի թարգմանությունների արդյունքում դրանց պատկանելության վերաբերյալ: Սեղմագրի առաջին մտքերը՝ «Ատենախոսությունը նվիրված է հայ մանկական գրականության ձեւավորման եւ զարգացման գործընթացի ուսումնասիրությանը 19-րդ դարից մինչեւ 20-րդ դարասկիզբ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով թարգմանական մանկագրության դերին: Ուսումնասիրվում է հայկական պարբերականներում տպագրված մանկական ընթերցանյութը՝ դիտարկելով վերջինիս ազդեցությունը ժանրային համակարգի, թեմատիկ շրջանակների եւ գեղարվեստական մտածողության ձեւավորման վրա» (էջ 3), հակասություն են առաջացնում խորագրի հետ: Մյուս կողմից սա խոստում է, որ հայ մանկական գրականության ձեւավորումն ու զարգացումը պիտի զուգակցվեն թարգմանականի հետ, ինչը, սակայն, ատենախոսության էջերում առանձնապես չի երեւում:

Աշխատանքի ներածության մեջ նշվում է. «Գաղտնիք չէ, որ հայ ժամանակակից մանկական գրականությունը հետ է մնում մեծահասակների գրականությունից: Պատճառներից է նախորդ ժամանակաշրջանի մանկագրության թերի ուսումնասիրությունը: Ժամանակակից մանկական գրականության թարգմանության համար բավարար տեսական հիմք չկա» (էջ 6): Արդյո՞ք սա դատավճիռ չէ ժամանակակից մանկագրության հանդեպ:

Առաջին զլխում անդրադարձ է կատարվում հայ-անգլիական գրական առնչություններին, այդ համատեքստում փորձ է արվում դիտարկել մանկական գրականության թարգմանության խնդիրները՝ հենվելով նաեւ հեքիաթի թարգմանական հարցադրումներին («Հայ թարգմանական հեքիաթի ակունքները» ենթագլուխը), ուր տարակուսելի է թվում նյութի ընդգրկվածությունը, որը սահմանափակվում է միայն «Պղնձե քաղաքի պատմության» վերաբերյալ ակնարկով

եւ մանկական գրականության մասին հետազոտողների կարծիքների մեջքերումով: Ըստ էության՝ ենթագլխի հարցադրումը թվում է ոչ բավարար պարզաբանված: Այս գլխում ավելորդ է թվում անգլիական աղբյուրների վկայակոչման պարագային մեջքերումների զուգադիր՝ հայերեն եւ անգլերեն տարբերակների առկայությունը (էջ 26-28, 30): Բավարար կլիներ միայն ներկայացնել հայերեն թարգմանությունը, քանի որ աշխատանքը շարադրված է հայերենով, իսկ շոշափվող նյութը չի վերաբերում թարգմանության հատկանիշներին: Եվ հանդիպում է դեպք, երբ մեջքերումը միայն օտար լեզվով է (էջ 32):

Ատենախոսության մեջ վիճարկելի է թարգմանական գրականությունը ազգային գրականության մաս դիտարկելու փորձը (էջ 8-9), որը կրկնվում է քանիցս եւ ըստ էության՝ վերաճում է հայեցակարգի (նաեւ եզրակացություններում՝ էջ 133): Միաժամանակ պիտի նկատել, որ ատենախոսը հակասում է ինքն իրեն, երբ նշում է, թե իր նպատակն է «ուսումնասիրել թարգմանական գրականության դերը հայ մանկական գրականության ցարգացման գործընթացում (էջ 8), ինչը գիտականորեն շատ ավելի հիմնավոր է թվում:

Երբեմն հանդիպում են նաեւ քերականական անհարթություններ, որոնք հաճախ են կրկնվում են, ինչպես օրինակ «դեպի հայերեն», «դեպի գրաբար» կառույցների օգտագործումն է (էջ 22, 58, 82, 85), անհաջող ձեւակերպումներ, ինչպես օրինակ «...թարգմանված գրականությունը... երբեմն ընդգրկել է համակերպվածության եւ հնազանդության բովանդակություն» (էջ 66): Աշխատանքում հանդիպում են նաեւ անհաջող ձեւակերպումներ, ինչպես օրինակ՝ «հայ գրական պրոդուկտ» կամ «մանկագրությունը ձեւավորում է ազգային ինքնագիտակցություն», «թարգմանությունները վերածվում են ինքնուրույն գործերի» արտահայտությունները, որոնք պատճառաբանության չեն դիմանում:

Աշխատանքի տարբեր ենթագլուխներ ունեն նախաբան մտքերի շարքեր, որոնք երբեմն ընթերցողին հեռացնում են անգլերենի թարգմանությունների ըմբռնումից, ինչը մի տեսակ շեղումի տպավորություն է թողնում աշխատանքի շարադրանքի մեջ:

Կրկնության վտանգ են բերում ատենախոսության տարբեր հատվածներում միեւնույն նյութին անդրադարձները, ինչպես Կալկաթայի թարգմանական դպրոցի հետ կապված (երկրորդ գլխի երկրորդ՝ «Թարգմանական մանկագրության առաջին

օրինակները եւ դրանց գաղափարական ուղղությունները հնդկահայ համայնքում» (էջ 39-52) եւ չորրորդ գլխի առաջին՝ «Թարգմանական միտումներն արեւելահայ գրական միջավայրում 19-րդ դարի վերջից մինչեւ 20-րդ դարասկիզբ» ենթագլուխներում (էջ 109-111), այնպես էլ Մխիթարյանների պարագային (երրորդ գլխի չորրորդ՝ «Հայ մանկագրության գաղափարական հենքը Մխիթարյան միաբանության թարգմանական ժառանգության մեջ» (էջ 92-103) եւ վերոնշյալ չորրորդ գլխի համապատասխան հատվածում (էջ 111-113)): Մխիթարյաններին վերաբերող մեկ անհամամասնություն էլ բերում է երրորդ գլխի երրորդ՝ «Եվրոպական գրական հոսանքների անդրադարձը արեւմտահայ մանկագրության մեջ» ենթագլուխը, ուր շարադրանքը բացառապես վերաբերում է «Բազմավեպ»-ի հարցադրումներին (էջ 84-92): Մեկ ամբողջական էջ (էջ 88-89) մեջբերում է ներկայացված հայր Արսեն Ղազիկյանից:

Էջ 46-ում տարբեր ազգերի հեղինակների թվարկումների մեջ հայտնվել է Շահնամեն, էջ 104-ում անգլիացի գրողների շարքին է դասվել ամերիկյան գրող Մարկ Տվենը:

Էջ 122-ում «Աղբիւր»-ի արեւելահայերեն թարգմանությունների շարքում նշվում են «Ապրիլի թիթեռնիկ մը» եւ «Եթէ շող մը ըլլամ ես...» կտորները, որոնք, սակայն, արեւմտահայերեն են եւ թարգմանվել են Հովհաննես Թ. Գալստյանի կողմից (տե՛ս՝ «Աղբիւր», 1898, թիվ 1 եւ թիվ 4), մանավանդ որ նույն թարգմանչի մասին հիշատակվում է նաեւ էջ 72-ում՝ արեւմտահայ թարգմանություններին նվիրված երկրորդ գլխում:

Էջ 125-ում ատենախոսը գրում է, որ անդրադառնալու է գերազանցապես միջնորդավորված թարգմանությունների եւ հաջորդ իսկ տողերում բերում ուղղակի թարգմանության օրինակ:

Արեւմտահայ մանկագրության կամ թարգմանություններին անդրադառնալիս հեղինակը շրջանցել է Ալբերտ Մակարյանի եւ Աստղիկ Սողոյանի համահեղինակած «Հակոբ Պարոնյանը մանկագիր» գիրքը (2021), չնայած հոդվածների մակարդակով Ա. Մակարյանին դիմումներ կան, ինչպես նաեւ մեծարենցյան թարգմանությունները անգլիագիր հեղինակներից (Յուզին Ֆիլդ եւ ուրիշներ, տե՛ս Հայկանուշ Շարուրյանի

«Մեծարենցը թարգմանիչ» հոդվածը, «Հայագիտության հարցեր» հանդես, 2022, թիվ 2(26), էջ 138-155):

Մեր առարկություններից մեկն էլ վերաբերում է եզրակացությունների անհամամասնությանը, երբ ատենախոսը միանգամից դրանց անդրադառնալու փոխարեն նորից վերադառնում է նպատակին եւ բավական երկար շարադրանքից հետո հաջորդ էջում անցում կատարում բուն եզրակացությունների հատվածին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Վարդուհի Աշոտի Բալոյանի «19-րդ դարի եւ 20-րդ դարասկզբի հայ թարգմանական մանկագրությունը (անգլիալեզու նյութերի թարգմանությունների հիման վրա)» թեկնածուական ատենախոսությունն ապացուցում է, որ հեղինակն ուսումնասիրել է հարուստ գրականություն, կատարված է բանասիրական ծավալուն աշխատանք: Ատենախոսությունը կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:



ՍՈՒՐԵՆ ԴԱՎԹԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Վ. ՊԱՐՏԻՋՈՒՆՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՅ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ

Հաստատում եմ պրոֆ. Ս. Դ. Դանիելյանի ստորագրությունը:

ՀԱՎՈՐ ՎԱՆԻԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ ԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳՈՒՄ



19.01.2026

